ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Նոր Գեղիի N 1 միջն.դպրոցի տնօրեն՝ Ն.Բաբախանյան

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

Նոր Գեղիի N 1 միջն.դպրոցի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023_2024ուս.տարի

ՄԿԱ գծով փոխտնօրեն՝ Մ.Օհանյան

2023-2024

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ

1. Պաշտոնային պարտականությունները՝

1) կազմակերպում և իրականացնում է ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ.

2) համակարգում է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները.

3) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

4) կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը.

5) ապահովում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: Կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար.

6) ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում.

7) ընդհանրացնում և միջոցներ է ձեռնարկում դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողների արդյունավետ, սահմանված կարգով երաշխավորված փորձը տարածելու համար.

8) աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը.

9) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ.

10) հսկում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը.

11) կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.

12) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:

2. Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին» օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները,

գ. աշխատանքի անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, առաջին բուժօգնության օգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները.

2) տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է կարողանա՝

ա. կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը,

բ. ապահովել սովորողի ընտանիքի հետ դպրոցի սերտ կապն ու համագործակցությունը,

գ. կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը, նպաստել սոցիալապես անապահով և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության իրականացմանը,

դ. աջակցել և ուղղորդել աշակերտական խորհուրդների աշխատանքը, ստեղծել պայմաններ հաստատության հասարակական վերահսկողության իրագործման համար:

3. Որակավորման պահանջը՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում:

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխան ատու
1	2	3	4	5
1.	Վերահսկել առցանց համակարգի միջոցով ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանների ընդունելությունը և գրանցումը	Հունիս-Օգոստոս	ԾԽ	Տնօրեն
1.2	Համակարգել և վերահսկել դպրոցի ախտահանման աշխատանքները.	Ուստարվա ընթացքում	Տնտեսվար Բուժքույր	Տնօրեն
2.	Պահպանել կանոնադրությամբ,ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:	Սեպտեմբեր	ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ	Տնօրեն
3.	Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար: Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալ Գրադարան ավար Դասղեկներ	Տնօրեն
4.	Կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական,արտադպրոցական աշխատանքները ԴԱԿ աշխատանքային պլանը և նրա գործունեությունը	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ Դասղեկներ	ՄԿԱ գծով տեղակալ

	ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ: ԲԱԺԻՆ **2**			
5.	Նշանակել դասղեկներին ,կազմակերպել և ղեկավարել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխաանքները և դասղեկների գործունեությունը,հստակեցնել յուրաքանչյուրի գործառույթները,պլանները ներկայացնել հաստատման:	Սեպտեմբեր	Տնօրեն, Փոխտնօրեններ	Տնօրեն
5.1	Հստակեցնել դպրոցում գործող խմբակները	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալ Խմբավարներ	ՄԿԱ գծով տեղակալ
6	Դասղեկական աշխատանքների բարելավում Դասղեկական ժամերի թեմատիկայի նպատակային ընտրություն՝ ելնելով սովորողների տարիքային առանձնահատկություններից (համագործակցության, հանդուրժողականության, ստեղծագործականութան, քննադատական մտածողության խթանում, տարբեր կարողություններով երեխաների ներուժի վերհանում և խրախուսում, արժեհամակարգի ձևավորում):	Սեպտեմբեր	ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ	ՄԿԱ գծով տեղակալ
6.1	Հայտարարել դասղեկական ժամերի թեմատիկ շաբաթներ, այդ թվում՝ «Մասնագիտական կողմնորոշում», «Բնապահպանություն և կայուն զարգացում», «Մեդիա գրագիտություն», «Ինքնագնահատում», «Հաղորդակցական հմտությունների զարգացում», «Հանդուրժողականություն» <<Քաղաքացիական կրթություն >>և այլ թեմաներով:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալ Դասղեկներ	ՄԿԱ գծով տեղակալ
6.2	Առարկայական ուսուցիչների հետ համագործակցությամբ՝ դաստիարակչական բաղադրիչի արդյունավետ ինտեգրում ծրագրային նյութի մեջ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալ Ուսմասվար	Տնօրեն
7.	Կատարել դասալսումներ: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել,վերլուծել ուսուցիչների հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություններն ու առաջարկությունները **:**	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ մ/մ նախագահներ	Տնօրեն
8.	Աշակերտական ինքնավարություն մարմինների կարողությունների զարգացման համար կազմակերպել սովորողների, հատկապես աշակերտական խորհուրդների անդամների և դպրոցական ակտիվի համար ուսուցում հետևյալ թեմաներով՝ «Աշակերտական խորհրդի ձևավորում»,«Աշակերտական խորհրդի հանձնախմբերի նաշակերտական բազմաբնույթ ակումբների ձևավորում,վերջիններիս աշխատանքների պլանավորում և իրականացում», «Միջոցառումների պլանավորում, գնահատում, հաշվետվության	Հոկտեմբեր	ՄԿԱ գծով տեղակալ Դասղեկներ ԴԱԿ ԱԽ	ՄԿԱ գծով տեղակալ

	պատրաստում», «Կամավորական, հանրօգուտ աշխատանք», «Համայնքային նախագծերի ստեղծում և իրականացում» և այլն:			

9.	Օժանդակել դպրոցում ռեսուրս կենտրոն ստեղծելու, ձևավորելու և կահավորելու աշխատանքները. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողին տրամադրվող և աջակցող ծառայությունների ժամանակացույցը, տևողությունը, ծավալը գրաֆիկը, բազմամասնագիտական աջակցության թիմը հաստատել տնօրենի կողմից:	Ուստարվա ընթացքում	Բազմամասնա գիտական թիմ	ՄԿԱ գծով տեղակալ , Ուսմասվար
9.1	Մասնակցել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը: Ստեղծել ԿԱՊԿՈՒ սովորողների անվանացանկը,նրանց ԱՈՒՊ-ները /անհատական ուսումնական պլանները/: Վերահսկել այդ երեխաների կրթության կազմակերպումը՝ ըստ պլաններում նշված ժամանակացույցի:	Ուստարվա ընթացքում	Ուսմասվար Ուսուցչի օգնականներ Աբովյանի մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոն	Ուսմասվար ՄԿԱ գծով տեղակալ
9.2	Անցկացնել սեմինարներ-հանդիպումներ <<Ներառական կրթություն. Կրթություն բոլորի համար>> թեմայով: Համագործակցել Աբովյանի մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոնի մասնագետների հետ:	Ուստարվա ընթացքում	Աբովյանի մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոն Բազմամասնա գիտական թիմ	ՄԿԱ գծով տեղակալ Ուսմասվար
9.3	Նպաստել հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը:	Ուստարվա ընթաքցքում	Բազմամասնա գիտական թիմ	ՄԿԱ գծով տեղակալ Ուսմասվար
9.4	Ստեղծել կրթության ասպարեզում անվտանգ,առողջ,ներառական և ռեսուրսներով արդարացիորեն ապահովվող պայմաններ,որոնք կնպաստեն հաջող ուսուցմանը և բոլորի համար ուսման առաջադիմության հստակ սահմանված մակարդակներին հասնելուն:	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ	ՄԿԱ գծով տեղակալ Ուսմասվար
9.5	Սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակացույցը հաստատել և պատճենը տրամադրել սովորողների ծնողներին:	Ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական	Ուսմասվար

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը Բաժին **3**				
10.	Օգնություն ցույց տալ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում: Ուսուցիչներին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	Օգոստոս-սեպտեմբեր	Ուսմասվար Մ/մ նախագահներ	ՄԿԱ գծով տեղակալ Ուսմասվար
11.	Ստեղծել <<Մասնագիտական զարգացման ակումբ>>՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար: Ուսուցչական անձնակազմում գործնական մասնագիտական մեծ փորձ և հաջողություններ ունեցող մարդկանց ընդգրկումը մասնագիտական կողմնորոշման որպես լավագուն օրինակ ա/ ամիսը մեկ անգամ իրականացնել մասնագիտական կողմնորոշման սեմինար դպրոցում բ/ տրամադրել աշակերտներին տեղեկատվական գրականություն գ/ կիրառել համացանցային որոնողական համակարգեր դպրոցներում, դ/ դեմ առ դեմ խորհրդատվություններ, խմբային խորհրդատվություններ, ե/ տեսաֆիլմերի դիտում և քննարկում մասնագիտական կողմնորոշման մասնագետի հետ, զ/էքսկուրսիաներ ձեռնարկություններ, հիմնարկություններ և ուսումնական հաստատություններ, է/ հանդիպումներ մասնագետների հետ հատուկ հատկացված սեմինարների ընթացքում, ը/ ԶԼՄ միջոցով մասնագիտությունների ներկայացում:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ Դասղեկներ	ՄԿԱ գծով տեղակալ Ուսմասվար
12.	Կազմակերպել ա/միջոցառումներ գիտաժողովներ, սեմինարներ, մեծարման երեկոներ, դաս-միջոցառումներ, ինտելեկտուալ խաղ-մրցույթներ բ/ լույս ընծայել պատի թերթեր, պաստառներ, վահանակներ, ստեղծել տեսագրություններ,ալբոմներ, մեթոդական անկյուններ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ ԱԽ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
13	Կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստել հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
14.	Աշխատանք տանել սովորողների վարքի,կուլտուրայի,	Ուստարվա	ՄԿԱ գծով	ՄԿԱ գծով

	վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը:	ընթացքում	փոխտնօրեն ԴԱԿ Դասղեկներ	փոխտնօրեն
15.	Աշակերտական ինքնավարություն մարմինների կարողությունների զարգացման համար կազմակերպել սովորողների, հատկապեսաշակերտական խորհուրդների անդամների և դպրոցական ակտիվի համար ուսուցում հետևյալ թեմաներով՝ «Աշակերտական խորհրդի ձևավորում», «Աշակերտական խորհրդի հանձնախմբերի և աշակերտական բազմաբնույթ ակումբների ձևավորում, դրանց աշխատանքների պլանավորում և իրականացում», «Միջոցառումների պլանավորում, գնահատում, հաշվետվության պատրաստում», «Կամավորական, հանրօգուտ աշխատանք»,	Ուստարվա ընթացքում	ԱԽ Դասղեկներ ԴԱԿ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
16.	Անցկացնել միջդասարանային, միջդպրոցական մրցումներ: Կազմակերպել <<Առողջության օր>> համադպրոցական միջոցառում-ակցիա:Դպրոց հրավիրել բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների գծով և կազմակերպել կլոր սեղան-հանդիպումներ, խորհրդատվություններ, սեմինարներ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ Ֆիզղեկ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
17.	Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը	Հունիս-հուլիս-	Դասղեկներ,	ՄԿԱ գծով փոխտնօրեն
18.	Ռազմահայրենասիրական աշխատանք: Կազմել աշխատանքային և միջոցառումների պլան և հետևել վերջիններիս կատարմանը:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ Դասղեկներ ԱԽ	ՄԿԱ գծով փոխտնօրեն Զինղեկ
19.	1. Համակարգել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացը 2. Հստակեցնել դպրոցում ռազմահայրենասիրական	Ուստարվա ընթացքում	Զինղեկ ԴԱԿ ԱԽ	ՄԿԱ գծով փոխտնօրեն Զինղեկ

	դաստիարակության գործընթացի մեթոդները, ձևերն ու միջոցները 3. Բարձրացնել դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախազորակոչային պատրաստության խնդիրների լուծման մեթոդների, միջոցների ու ձևերի արդյունավետությունը 4. Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր և հուշարձաններ /պատրաստել լուսանկարներ, նկարներ, տեսահոլովակներ և ցուցադրություններ կազմակերպել/ 5. Այց՝ ՀՀ ԶՈՒ, զորամասեր, մարտական փառքի վայրեր		Դասղեկներ N զորամաս	
20.	Բարելավել ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը դպրոցում և ավելացնել ռազմական ուսումնական հաստատության դիմողների թիվը	Ուստարվա ընթացքում	ԱԻՆ Զինղեկ Դասղեկներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
21.	Կազմակերպել և անցկացնել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց կանխարգելման ու հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներ: ա/Աղետների ռիսկի նվազեցման կրթություն_ դասընթացներ բ/վտանգի բացահայտում և գնահատում_զրույցներ գ/բնական և տեխնածին վտանգներ_պարապմունքներ	Ուստարվա ընթացքում	ԱԻՆ Զինղեկ Դասղեկներ	

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲԱԺԻՆ **4**

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
22.	Յուրաքանչյունը ամսվա վերջին տնօրենության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն Փոխտնօրեններ	Տնօրեն
23.	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրենության նիստում կամ մանկաարժական խորհրդի նիստում:	սեպտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն	Տնօրեն
24.	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Ամիսը մեկ անգամ հրավիրել դասղեկների ժողովներ և արդյունքները քննարկել: Լսել զեկուցումներ առաջարկություններ դասղեկական աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով փոխտնօրեն Դասղեկներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԲԱԺԻՆ **5**				

25.	Դպրոցում ԾԽ ժողովների և հավաքների կազմակերպման ուղղությամբ ձեռնարկել բոլոր միջոցները համապատասխան պահանջվող կանոնների	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով փոխտնօրեն Դասղեկներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
26.	Ապահովել դպրոցի և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: Կազմակերպել համադպրոցական, դասարանական ծնողական ժողովներ,նիստեր, հավաքներ**:** 1. Հրավիրել ԾԽ-ի նիստ,քննարկել դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունը և տնօրենի աշխատանքային պլանը: 2. Ստեղծել դպրոցի ԾԽ-ի կազմը և հաստատել:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ԾԽ Դասղեկներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
27.	ա/ Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների արտադպրոցական և արտադասարանական, ներդպրոցական միջոցառումներին: բ/ Կազմել գործողությունների պլան,որի շարքում կընդգրկվեն տոնական միջոցառումներ (հանդեսներ, հավաքներ,դասընթացներ, ցերեկույթներ, էքսկուրսիաներ, մրցույթներ, շաբաթօրյակներ, ճանաչողական այցեր և այլն)	Ուստարվա ընթացքում	ԾԽ ԴԱԿ Դասղեկներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
28.	Կազմակերպել աշխատանքային հանդիպումներ <<Ուսուցիչ-ծնող համագործակցությունը՝ որպես ուսուցման արդյունավետության գրավական>> Սեմինար հանդիպումներ, քննարկումներ, զրույցներ տարբեր թեմաներով	Ուստարվա ընթացքում	Բազմամասնա գիտական թիմ ԾԽ Դասղեկներ ԴԱԿ ԱԽ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
29.	Կազմակերպել ծնողների համար անցկացվելիք զրույցների և սեմինարների թեմատիկ պլան և իրականացնել. Կազմակերպել <<Բազմազանություն և հանդուրժողականություն>>, <<Երեխաների սոցիալական պաշտպանություն>> թեմայով սեմինարներ,դասընթացներ:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ԱԽ ԾԽ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
30.	Մշակել և կազմակերպել գործողությունների պլան արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման համար. ա/ Այցեր պատմամշակութային կենտրոններ, պատկերասրահներ: պետական քոլեջներ, Պետական դրամատիկական թատրոններ և այլն	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով Փոխտնօրեն ԾԽ	ՄԿԱ գծով փոխտնօրեն

31.	Համակարգել և ակտիվացնել ծնողներների ներգրավվածությունը և մասնակցությունը <<Դպրոցական Կայուն Սնունդ>>/տաք սնունդ/ ծրագրի իրականացումը դպրոցում: Պարբերաբար անցկացնել մոնիտորինգ, արդյունքները քննարկել ԾԽ-ի նիստերում և առաջարկությունները ներկայացնել տնօրենությանը:	Ուստարվա ընթացքում	Դասվարներ Բուժքույր ԾԽ	ՄԿԱ գծով փոխտնօրեն
32.	Կազմակերպել և անցկացնել սեմինար-հանդիպումներ **<<**Դաստիարակության դրական մոտեցումներ**>>** թեմայով : ա/ Հասկանանք երեխային և ինքներս մեզ: բ/ Ի՞նչ է պատիժը:Պատժի տեսակները: գ/ Երեխաների իրավունքները: դ/ Դրական դաստիարակչական մոտեցումներ: ե/ Ակտիվ ունկնդրում: զ/ Խրախուսում: է/ Սթրեսի կառավարում:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով փոխտնօրեն ԾԽ Դասընթացավարներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

33.	Օժանդակել և աջակցել դպրոցում «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի աշխատանքների նպատակամետ գործարկմանը	Ուստարվա ընթացքում	Փոխտնօրեններ Խմբավար	ՄԿԱ գծով փոխտնօրեն
34.	Օժանդակել և աջակցել դպրոցում ԿԱՊԿՈՒ ռեսուրս կենտրոն ստեղծելու,ձևավորելու և կահավորելու համար/ԿԳՄՍ/:	Ուստարվա ընթացքում	Ուսմասվար	ԿԳՄՍ
35.	Շարունակել համագործակցել Աբովյանի տարածքային մասնաճյուղի, <<Երիտասարդական միավորման>>, <<Կանաչ կենտրոնի>>-ի այլ կազմակերպությունների հետ ուսումնադաստիարակչական և տնտեսական ծրագրեր իրականացնելու:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ԱԽ Փոխտնօրեններ ԾԽ	Տնօրեն
36.	Համագործակցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հետ իրականացնելու կրթական և ուսումնաօժանդակ ծրագրեր			

Դպրոցի աշխատանքի գերակայությունները
2022-2023 ուսումնական տարում

- ✓ Կրթություն, զարգացող անհատականություն.
- ✓ առողջ ապրելակերպի ձեւավորումը, ստեղծել առողջության կողմնորոշման և կրթական գործունեության ուղղվածության համակարգ.
- ✓ կրթության բովանդակությունը, ապահովելով իր որակական մակարդակը.
- ✓ Անհատական մոտեցում ուսուցիչների, աշակերտների, ծնողների.
- ✓ կրթական համակարգի զարգացում
- ✓ շարունակականության ապահովում է ուսումնական գործընթացի
- ✓ կրթական միջավայրի հզորացում դպրոցում:.

Նպատակը - Ստեղծել ժամանակակից կրթական , ազգային կրթության ռազմավարության նախաձեռնություն,

• պահպանել և բարելավել ուսումնական գործընթացում մասնակիցների առողջությունը.

• Անցում և ուսուցում ըստ կրթական չափորոշիչների, և անհատի զարգացման նպատակին հասնելու ուղիների.

• Աջակցություն շնորհալի եւ տաղանդավոր երեխաներին:

• ուսուցչի պոտենցիալի հզորացում.

• կրթական և ուսուցման գործընթացի ամբողջական մոտեցում և իրականացում.

Ակնկալվող արդյունքները

• կրթական, ֆիզիկական, հոգեբանական դժվարությունների հաղթահարում , աշակերտների առողջությանպահպանման պայմաններ ստեղծելու համար.

• յուրաքանչյուր աշակերտի կարիքները հիման վրա ըստ իր ունակությունների, շահերի, կրթական և ճանաչողական կարողությունների անհատական և տարբերակված ուսուցում կազմակերպելու համար տեխնոլոգիաների զարգացումը և իրականացում:

• անհատի ձեւավորումն ու զարգացումն ապահովող համալիր բարենպաստ պայմանների ստեղծում, որտեղ կարևորվում է հատկանիշներ՝ նախաձեռնություն, ստեղծագործաբար մտածելու , ստեղծագործական լուծումներ գտնելու կարողություն, պատրաստակամություն՝ սովորելու ամբողջ կյանքում:

• ստեղծագործական կազմի ստեղծում, ուր կլինեն պլանավորման և ծրագրավորման, նորարարությունների փորձարկման նախաձեռնություններ, որոնք կնպաստեն մանկավարժական մասնագիտական հմտությունների զարգացմանը.

Երեխաների իրավունքների պաշտպանություն.

1. Երեխաների սոցիալական եւ իրավական պաշտպանություն
1.1. Կենսամակարդակի ուսումնասիրում
1.2. Հարաբերությունները ծնողների, հարազատների հետ
1.3. Առարկայական պատրաստվածության մակարդակը
1.4. Դաստիարակության նկարագիրը.
1.5. Արտադպրոցական զբաղվածությունը, ազատ ժամանակի կազմակերպումը.
1.6. Առողջական վիճակը:
2. Աշխատանք բազմազավակ ընընանիքների հետ.
3. Աշխատանք սոցիալապես անապահով ընտանիքների հետ:

Դպրոցում առողջ միջավայրի ստեղծում

Նպատակը՝ առողջ ապրելակերպի սովորույթների ձևավորում.

Խնդիրներ

1) երեխաներիև և դպրոցի աշխատակիցների միջավայրի առողջապահական ստանդարտների համապատասխանություն.

2) առողջ ապրելակերպի անցնելու ուղիների նպաստում և քարոզում .

3) ձևավորել ամուր հավատ և անձնական պատասխանատվություն սեփական առողջական վիճակի ձևավորման գործում.

4) դաստիարակել վարք տարբեր իրավիճակներում անհատական անվտանգության, շրջակա միջավայրի եւ մշակույթի պահպանման համար:

Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Սովորողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ուսումնական հաստատությունում կարգապահությունն ապահովվում է օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

2. Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում սույն օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն:

3. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում ուսումնական հաստատությունը կարող է՝

1) առաջարկել ծնողին սովորողին տեղափոխել այլ ուսումնական հաստատություն.

2) դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնին՝ երեխային սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու առաջարկով:

5. Եթե ոչ պետական ուսումնական հաստատության, մասնագիտացված հանրակրթական դպրոցի, ինչպես նաև այլընտրանքային ուսուցման համակարգում սովորողը կամ նրա ծնողը չի պահպանել պայմանագրային դրույթները, կամ սովորողը չի ապահովել կրթության բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները, ապա տվյալ ուսումնական հաստատությունը կարող է միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տասն օր առաջ տեղյակ պահելով ծնողին:

6. Ուսումնական պարապմունքներից սովորողի հաճախակի անհարգելի բացակայության համար պատասխանատվություն է կրում ծնողը՝ օրենքով սահմանված կարգով:

Սովորողների առողջության պահպանումը

1. Ուսումնական հաստատությունն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

2. Սովորողների առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելելու, վերականգնելու նպատակով յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն՝ ուսումնական հաստատության բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Սովորողների խրախուսումը

1. Սովորողների համար ուսումնական հաստատության, նրա հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:


Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները
Հայեցի դաստիարակություն
Հոգևոր դաստիարակություն
Գեղագիտական դաստիարակություն
Ռազմահայրենասիրական դաստիարակություն
Ֆիզիկական դաստիարակություն
Աշխատանքային դաստիարակություն
Բնապահպանական դաստիարակություն
Դպրոց-ընտանիք կապը

Օգտակար հղումներ:

Բլյումի տաքսոնոմիան և կրթականվերջնարդյունքները:



Դպրոցում իրականացվող աշխատանքները ուղղված են 21-րդ դարի հմտություններին ձևավորմանը:



21-րդ դարի հմտություններ

Բնավորության որակները
Ինչպես են ուսանողները ընկալում փոփոխվող միջավայրը

11. Հետաքրքրասիրությամբ
12. Նախաձեռնությամբ
13. Համառությամբ
14.Հարմարվողականությամբ
15. Առաջնորդությամբ
16. Սոցիալական և Մշակութային իրազեկվածությամբ

Հարատև Ուսուցում